ՀԱՎԵԼՎԱԾ

- **2020 թ. դեկտեմբերի 30-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից տեղեկատվություն է հայցել մի շարք հարցերի վերաբերյալ, մասնավորապես՝ այն մասին, թե**

1. 2010-2020 թթ. ընթացքում քանի անձի վերաբերյալ հարուցված քրեական գործի մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը (հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելու պատճառով) կարճվելուց հետո  են եռամյա ժամկետում ոչնչացվել օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը՝ համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի*:*

   *Ի պատասխան հարցմանը տեղեկացվել է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում տվյալ գործընթացն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Հավելվել է, որ հարցման մեջ նշված անձանց թվի ուղղությամբ վիճակագրություն չի վարվում:*

2. Կազմակերպության կողմից տեղեկատվություն է պահանջվել նաև 2010-2020 թթ. ընթացքում օրենքով սահմանված կարգով ազգային անվտանգության մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցում պահանջած պետական մարմինների, կազմակերպությունների և/կամ քաղաքացիների թվի վերաբերյալ:

   *Ի պատասխան տեղեկացվել է, որ նշված ժամանակահատվածում ՀՀ ազգային անվտանգության մարմինների գործողություններն իրավական դաշտում ապօրինի որակելու և այդ կապակցությամբ վնասի հատուցման դեպքեր չեն արձանագրվել:*

**3.** Կազմակերպության կողմից տեղեկատվություն է պահանջվել նաև այն մասին, թե՝ 2010-2020 թթ. ընթացքում օպերատիվ ստորաբաժանման քանի աշխատակից է զեկուցել ստացած հրամանի կամ ցուցումի օրինականության վերաբերյալ իր

կասկածների մասին ցուցումը տվողին կամ վերադասին՝ համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

*Ի պատասխան տեղեկացվել է, որ ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումներում ստացված հրամանների կամ ցուցումների վերաբերյալ քննարկումներն իրականացվում են աշխատանքային կարգով՝ պահպանելով ծառայողական ստորիճանակարգության ու համապատասխան իրավական ակտերի պահանջները և այդ ուղղությամբ վիճակագրություն չի վարվում:*

***Կարող ենք փաստել, որ այնպիսի կարևոր հարցերի մասին, ինչպիսիք են հարուցված քրեական գործերի նյութերի ոչնչացումը և օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցների ստացած հրամանի օրինականության վերաբերյալ կասկածների մասին զեկուցման դեպքերը, ՀՀ ԱԱԾ-ն վիճակագրություն չի վարվում:***

- **2021 թ. մարտի 17-ին Կազմակերպությունը տեղեկատվություն է պահանջել հետևյալի հարցերի մասին.**

1. 2010-2020 թթ. ընթացքում քանի քրեական գործ է հարուցվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

   *Ի պատասխան տեղեկացվել է, որ ՀՀ ԱԱԾ-ում օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հարուցված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:*

2. 2010-2020 թթ. ընթացքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հարուցված քրեական գործերից քանիսով է նախաքննությունն իրականացվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից, քանիսն է փոխանցվել նախաքննության այլ մարմնի:

   *Հաշվի առնելով արխիվացման ընթացակարգերը՝ տրամադրվել է ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործերի ցուցակը միայն 2016-2020 թթ. համար:*

Այսպիսով՝ ԱԱԾ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2016-2020 թթ. ընթացքում ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի կողմից հարուցվել է **1371 քրեական գործ**: Մասնավորապես՝

- **2016 թ-ին 186 քրեական գործ**, որից
  - 137-ով իրականացվել է նախաքննություն ԱԱԾ կողմից,
  - 49-ը ուղարկվել է ըստ ենթակայության,
- **2017 թ-ին՝ 202**, որից
  - 162-ով իրականացվել է նախաքննություն ԱԱԾ կողմից,
  - 40-ը ուղարկվել է ըստ ենթակայության,
- **2018 թ-ին՝ 272**, որից
  - 183-ով իրականացվել է նախաքննություն ԱԱԾ կողմից,
  - 89-ը ուղարկվել է ըստ ենթակայության,
- **2019 թ-ին՝ 356**, որից
  - 198-ով իրականացվել է նախաքննություն ԱԱԾ կողմից,
  - 158-ը ուղարկվել է ըստ ենթակայության,
- **2020 թ-ին՝ 355**, որից
  - 147-ով իրականացվել է նախաքննություն ԱԱԾ կողմից,
  - 208-ը ուղարկվել է ըստ ենթակայության:

***Այսպիսով, 1371 գործերից 544 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 827 գործով ԱԱԾ-ի կողմից իրականացվել է նախաքննություն, որից 290 գործով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 9-րդ մասերի համաձայն ԱԱԾ-ին նախաքննություն իրականացնելու լիազորություն վերապահված չէ:***

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված են 2016-2020 թթ. ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի կողմից հարուցված քրեական գործերը՝ ըստ տարիների և հոդվածների:

*Աղյուսակ 1. 2016-2020 թթ. ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի կողմից հարուցված քրեական գործերն՝ ըստ տարիների և հոդվածների*

| Հ/Հ | ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Իրականացվել է նախաքննություն | Ուղարկվել է դատախազություն | Իրականացվել է նախաքննություն | Ուղարկվել է դատախազություն | Իրականացվել է նախաքննություն | Ուղարկվել է դատախազություն | Իրականացվել է նախաքննություն | Ուղարկվել է դատախազություն | Իրականացվել է նախաքննություն | Ուղարկվել է դատախազություն | |
| | *ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | | | | | | | | | | | **0** |
| 1. | 104<br>Սպանությունը | | | 3 | | | | | | 1 | | **4** |
| 2. | 112<br>Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը | | | | | 1 | | | | | | **1** |
| 3. | 119<br>Խոշտանգումը | | | | | | | | | | 1 | **1** |
| | *ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 4. | 131<br>Մարդուն առևանգելը | | 1 | | | 1 | 1 | 1 | | 2 | 1 | **7** |
| 5. | 132<br>Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը | | | | 1 | | 1 | | | | | **2** |
| 6. | 133<br>Ազատությունից ապօրինի զրկելը | | | | | | | | 1 | | | **1** |
| 7. | 137<br>Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը | | | | 1 | 1 | | | | | 2 | **4** |
| | *ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 8. | 144<br>Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը | 1 | | | | | 1 | | | | 1 | **3** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9. | $154^{1}$<br>Քվեարկության գաղտնիությունը խախտելը | | | | | | | | 1 | | 1 | **2** |
| 10. | $154^{2}$<br>Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը | | | | | | | | | 2 | | **2** |
| | *ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 11. | 168<br>Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը | | | | | | | | 1 | | 1 | **2** |
| | *ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 12. | 175<br>Ավազակություն | | | | | 1 | | | | 1 | | **2** |
| 13. | 176<br>Կողոպուտը | | | | | | | | | 5 | | **5** |
| 14. | 177<br>Գողությունը | | 1 | | | | 2 | | | | | **3** |
| 15. | 178<br>Խարդախությունը | 4 | 9 | 6 | 6 | 10 | 15 | 11 | 35 | 4 | 48 | **148** |
| 16. | 179<br>Յուրացնելը կամ վատնելը | 3 | 8 | 1 | 2 | 6 | 11 | 10 | 9 | 3 | 22 | **75** |
| 17. | 181<br>Հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ | 1 | 2 | 4 | 1 | | 2 | | 3 | | | **13** |
| 18. | 182<br>Շորթումը | | | | | 5 | 2 | 2 | 4 | | 2 | **15** |
| 19. | 184<br>Գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով | | | | | | | 1 | | 1 | | **2** |
| 20. | 184.1<br>Գրավառուին վնաս պատճառելը | | | | | | | | | | 1 | **1** |
| 21. | 185<br>Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը | | | | | 1 | | | 1 | | | **2** |
| | *ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 22. | 188<br>Ապօրինի ձեռնարկատիրությունը | 1 | 3 | 5 | | 2 | 1 | | 5 | | 2 | **19** |
| 23. | 188.1<br>Առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի | 1 | | 1 | | | | | | | | **2** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրականացումը | | | | | | | | | | | |
| 24. | 189<br>Կեղծ ձեռնարկատիրություն | 1 | | | | | | | | | 1 | **2** |
| 25. | 189.1<br>Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը | | | | | | | | | | 1 | **1** |
| 26. | 190<br>Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը) | 6 | | 1 | | 6 | | | | 8 | 1 | **22** |
| 27. | 192<br>Անօրինական գործողությունները սնանկության ընթացքում | | | | | | | | 1 | | | **1** |
| 28. | 193<br>Կանխամտածված սնանկություն | | | | | | | | 1 | | | **1** |
| 29. | 195<br>Հակամրցակցային գործունեություն | | | | | | | | | 1 | 1 | **2** |
| 30. | 200<br>Առևտրային կաշառքը | | | 2 | | 2 | 2 | | 2 | | 1 | **9** |
| 31. | 201<br>Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը | 1 | | 1 | 2 | | | 1 | | | | **5** |
| 32. | 202<br>Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը | 1 | | 3 | | 3 | 2 | 1 | 1 | | | **11** |
| 33. | 203<br>Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը | 3 | | 2 | | | | | | | | **5** |
| 34. | 205<br>Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը | 3 | | 3 | 2 | 4 | | 6 | 4 | 1 | 1 | **24** |
| 35. | 207 | | | | | | | 1 | | | | **1** |
| 36. | 212<br>Սպառողներին խաբելը | | | | | 1 | | 1 | | | | **2** |
| 37. | 213<br>Վաշխառություն | | | | 1 | | | | 1 | | | **2** |
| 38. | 214<br>Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը | 4 | 2 | 1 | | 2 | 2 | 1 | 1 | | 3 | **16** |
| 39. | 215<br>Մաքսանենգություն | 10 | | | | | | | | | | **10** |
| 40. | 215.1<br>Կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգություն | | | 3 | | | | 3 | | | | **6** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41. | 216<br>Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը | | | | | | | | | | 1 | **1** |
| | *ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 42. | 217<br>Ահաբեկչությունը | | | | | 1 | | 1 | | | | **2** |
| 43. | 219<br>Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը | | 1 | | | | | | | | | **1** |
| 44. | 223<br>Հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ ղեկավարելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը | | | 1 | | | | | | | | **1** |
| 45. | 223.4<br>Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը | | | | | | | | | 3 | 3 | **6** |
| 46. | 225<br>Զանգվածային անկարգությունները | | | | | | | | | 2 | | **2** |
| 47. | 226<br>Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը | | | | | 1 | | | | 3 | | **4** |
| 48. | 226.1<br>Ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային ահաբեկչության հրապարակային կոչերը, նշված հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը | | | | | | | | | 1 | | **1** |
| 49. | 233<br>Ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառությունը | 2 | | | | 1 | | 1 | 1 | | | **5** |
| 50. | 235<br>Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը | 9 | | 10 | 1 | 6 | 1 | 8 | | 3 | 5 | **43** |
| 51. | 235.1<br>Խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման | 1 | | 1 | | 1 | | | 1 | | | **4** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգությունը | | | | | | | | | | | |
| | *ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 52. | 254<br>Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը | 2 | 1 | 2 | | | | 1 | 2 | | 7 | **15** |
| 53. | 256<br>Վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը և տարածելը | | | | | 1 | | | | | | **1** |
| | *ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 54. | 258<br>Խուլիգանությունը | | | | | | | 1 | | | | **1** |
| 55. | 259<br>Ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը | | | | | | | 1 | 2 | | | **3** |
| | *ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 56. | 266<br>Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը | 6 | | 5 | | 7 | 1 | 10 | 3 | 5 | 7 | **44** |
| 57. | 267.1<br>Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը | 3 | | 13 | | 22 | | 31 | 1 | 19 | | **89** |
| 58. | 268<br>Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի | | | 5 | 1 | 4 | | | | 1 | | **11** |
| 59. | 275<br>Խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը | 1 | | | | | | 1 | | | | **2** |
| 60. | 280<br>Մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելը, կեղծ դեղեր պատրաստելը կամ արտադրելը կամ իրացնելը | | | 1 | | | 4 | | 2 | | | **7** |
| | *ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 61. | 291<br>Ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելը | | | | | | | 1 | | | | **1** |
| 62. | 296<br>Ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը կամ ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելը | | 1 | | | 1 | | | | 1 | 1 | **4** |
| | *ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 63. | 299<br>Պետական դավաճանությունը | | | | | | | | | 2 | | **2** |
| 64. | 300<br>Իշխանությունը յուրացնելը | | | | | | | | | 1 | | **1** |
| 65. | 300.1<br>Սահմանադրական կարգը տապալելը | | | | | | | | | 1 | 1 | **2** |
| | *ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 66. | 302<br>Լրտեսությունը | 1 | | | | | | 1 | | 1 | | **3** |
| 67. | 305<br>Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը | | | | | | | | | 1 | | **1** |
| 68. | 307.1<br>Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները խախտելը | | | | | | | | | | 2 | **2** |
| 69. | 307.4<br>Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը | | | | | | | | | 1 | | **1** |
| | *ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 70. | 308<br>Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը | 4 | 3 | 3 | 8 | 9 | 14 | 27 | 30 | 8 | 15 | **121** |
| 71. | 309<br>Պաշտոնեական լիազորություններն անցնելը | | | | | | | | 1 | | 4 | **5** |
| 72. | 310.1<br>Ապօրինի հարստանալը | | | | | | | | | 2 | | **2** |
| 73. | 311<br>Կաշառք ստանալը | 7 | 1 | 5 | 2 | 10 | 13 | 15 | 15 | 15 | 28 | **111** |
| 74. | 311.1<br>Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն | | 2 | | | | | | | 1 | 3 | **6** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը | | | | | | | | | | | |
| 75. | 312<br>Կաշառք տալը | 1 | | | | 1 | | 3 | 2 | | 1 | **8** |
| 76. | 314<br>Պաշտոնեական կեղծիքը | 1 | 3 | | | | | | 2 | | 2 | **8** |
| 77. | 314.3<br>Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը | | | | | | 1 | | | | | **1** |
| 78. | 315<br>Պաշտոնեական անփութությունը | | | | | | | | 1 | | 2 | **3** |
| | *ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 79. | 316<br>Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը | | | | | | 1 | | | 1 | 1 | **3** |
| 80. | 322<br>Ինքնիրավչությունը | | | | | 1 | | | | | | **1** |
| 81. | 324<br>Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը | | | | | | | | 1 | | 1 | **2** |
| 82. | 325<br>Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը | 6 | 7 | 14 | 10 | 7 | 9 | 3 | 15 | 4 | 11 | **86** |
| 83. | 326<br>Պաշտոնական փաստաթղթեր ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը | 1 | | 1 | | | | | | | | **2** |
| 84. | 327<br>Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը | | | | | | | | 1 | | 2 | **3** |
| 85. | 329<br>Պետական սահմանն ապօրինի հատելը | 32 | 1 | 42 | 2 | 50 | 2 | 31 | 4 | 23 | 2 | **189** |
| 86. | 329.1<br>Անօրինական միգրացիայի կազմակերպումը | 20 | 2 | 22 | | 12 | | 20 | | 7 | 1 | **84** |
| | *ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* | | | | | | | | | | | **0** |
| 87. | 332<br>Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը | | | | | | | | | 1 | | **1** |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 88. | 332[1]<br>Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը | | | | | | | | | | 1 | **1** |
| 89. | 333<br>Սուտ մատնությունը | | | | | | | | 1 | 1 | 2 | **4** |
| 90. | 338<br>Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը | | | | | | | | 1 | | | **1** |
| 91. | 339<br>Ցուցմունք տալուց հրաժարվելը | | | | | | | | | 5 | | **5** |
| 92. | 344<br>Դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ հարկադիր կատարողին զրպարտելը | | | | | | | 2 | | 1 | | **3** |
| 93. | 349<br>Ապացույցները կեղծելը | 1 | | | | | | | | | | **1** |
| | ***Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները*** | | | | | | | | | | | **0** |
| 94. | 356<br>Հրամանը չկատարելը | | | | | | | | | | 1 | **1** |
| 95. | 358<br>Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը | | | 1 | | | | | | | | **1** |
| 96. | 360<br>Զինծառայողին վիրավորանք հասցնելը | | | | | 1 | | | | | | **1** |
| 97. | 363<br>Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը | | | | | | | 1 | | | 2 | **3** |
| 98. | 364<br>Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը | | | | | | | | | 3 | 6 | **9** |
| 99. | 375<br>Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը | | | | | 1 | 1 | | 1 | 1 | 3 | **7** |
| 100. | 376<br>Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ | | | | | | | | | | 1 | **1** |
| 101. | 379<br>Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը | | | | | | | | | | 1 | **1** |
| **Ընդամենը** | | **137** | **49** | **162** | **40** | **183** | **89** | **198** | **158** | **147** | **208** | **1371** |

**Ինչպես կարելի է նկատել աղյուսակից՝ 2016 – 2020 թթ. ընթացքում բոլոր տարիներին քրեական գործեր հարուցվել են հետևյալ հոդվածներով.**

1. *խարդախությունը,*
2. *յուրացում կամ վատնումը,*
3. *հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը,*
4. *առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը,*
5. *ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահել, փոխադրելը կամ կրելը,*
6. *թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը,*
7. *թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը,*
8. *պաշտոնեական լիազորությունները չարաշահելը,*
9. *փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը,*
10. *պետական սահմանն ապօրինի հատելը,*
11. *անօրինական միգրացիայի կազմակերպումը:*

**Ամփոփելով 2016 - 2020 թթ. ընթացքում իրավախախտումների տեսակն ըստ քանակի՝ կարող ենք արձանագրել, որ առավել թվով քրեական գործեր հարուցվել են հետևյալ հոդվածներով.**

1. *պետական սահմանն ապօրինի հատելը (189 ),*
2. *խարդախությունը (148),*
3. *պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (121),*
4. *կաշառք ստանալը (111),*
5. *թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը (89),*
6. *փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը (86),*
7. *անօրինական միգրացիայի կազմակերպումը (84),*
8. *յուրացնելը կամ վատնելը (75),*
9. *թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (44),*
10. *ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (43),*
11. *հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը (24),*
12. *հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը) (22),*
13. *ապօրինի ձեռնարկատիրությունը (19),*
14. *առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը (16),*
15. *շորթումը (15),*
16. *համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը (15),*
17. *հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ (13),*
18. *կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը (11),*
19. *թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի (11),*
20. *մաքսանենգությունը (10),*
21. *առևտրային կաշառքը (9),*
22. *զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը (9)*
23. *կաշառք տալը (8),*
24. *պաշտոնեական կեղծիքը (8),*
25. *մարդուն առևանգելը (7),*

*26. մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելը, կեղծ դեղեր պատրաստելը կամ արտադրելը կամ իրացնելը (7),*
*27. իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը (7),*
*28. քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը (6),*
*29. կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգությունը (6),*
*30. պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը (6),*
*31. ավազակությունը (5),*
*32. արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առնտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը (5),*
*33. կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը (5),*
*34. ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառությունը (5),*
*35. պաշտոնեական լիազորություններն անցնելը (5),*
*36. ցուցմունք տալուց հրաժարվելը (5),*
*37. սպանությունը (4),*
*38. սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը (4),*
*39. ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը (4),*
*40. խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգությունը (4),*
*41. ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը կամ ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելը (4),*
*42. սուտ մատնությունը (4),*
*43. անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը (3),*
*44. գողությունը (3),*

*45. ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը (3),*
*46. լրտեսությունը (3),*
*47. պաշտոնեական անփութությունը (3),*
*48. իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը (3),*
*49. ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը (3),*
*50. դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ հարկադիր կատարողին զրպարտելը (3),*
*51. անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը (3),*
*52. մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը (2),*
*53. քվեարկության գաղտնիությունը խախտելը (2),*
*54. ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը (2),*
*55. խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը (2),*
*56. ավազակությունը (2),*
*57. գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով (2),*
*58. գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (2),*
*59. առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացումը (2),*
*60. կեղծ ձեռնարկատիրությունը (2),*
*61. հակամրցակցային գործունեությունը (2),*
*62. սպառողներին խաբելը (2),*
*63. վաշխառությունը (2),*
*64. ահաբեկչությունը (2),*
*65. զանգվածային անկարգությունները (2),*
*66. խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը (2),*
*67. պետական դավաճանությունը (2),*
*68. սահմանադրական կարգը տապալելը (2),*
*69. ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները խախտելը*
*70. ապօրինի հարստանալը (2),*
*71. փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը (2),*

*72. պաշտոնական փաստաթղթեր ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը (2),*

Մյուս բոլոր հոդվածներով 2016 - 2020 թթ. ընթացքում հարուցվել են մեկական քրեական գործեր:

